ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵԻՆ

Նորին Սրբություն Գարեգին Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսը փետրվարի 11-ին հետևյալ հեռագիրն է հղել Վրաստանի Հանրապետության նախագահ Էդուարդ Շևարդնաձեին՝ նախագահի դեմ գործված մահափորձի առիթով։

ՁԵՐԴ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ
ՊՐՆ. ԷԴՈՒԱՐԴ ՇԵՎԱՐԴՆԱՁԵ
ՆԱԽԱԳԱՀ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԹԻՖԼԻՍ

Մեծարգո նախագահ և սիրելի բարեկամ,

Սրտի խոր ցավով և ընդվզումով այսօր իմացանք Ձեր անձի դեմ գործված այս երկրորդ վայրագ սպանության փորձի մասին։

Խստիվ դատապարտում ենք կատարված այս բիրտ և անմարդկային արարքը։

Հազար փառք Աստծուն, որ դարձյալ անվտանգ դուրս եկաք այս բիրտ անմարդկային մահափորձից։

Աղոթում ենք մեր երկնավոր Հորը, որ Իր Աջը հովանի պահի Ձեր և Ձեր սիրելի հայրենիքի, մեր հարևան և բարեկամ Վրաստանի վրա։

Մեր Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու և Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի անունից հայտնում ենք Ձեզ և վրաց եղբայրական ժողովրդին մեր սրտագին մաղթանքները և ջերմ համակրանքն ու սերը։ Թող խաղաղությունը, ապահովությունը և արդարությունը ծաղկեն և բարգավաճեն Վրաստանում, որպեսզի բարօրության և զարգացման ճանապարհով առաջ գնա սիրելի Վրաստանը իր անկախ հանրապետությամբ, իր ազգային եկեղեցիով և իր ազնիվ ժողովրդով։

Սիրո ողջույններով և հայրական ջերմ զգացմունքներով՝

Աղոթարար՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ